



6. ԿԱՐՄԻՐ ԿՈՎԻ ԽԵՔՅԱԹԸ

Ժամանակով կըլնի մեկ մարդ, մեկ կնիկ, էրկու էրեխսա՝ մեկ տղա, մեկ ախչիկ. ըտոնց մե կարմիր կով կըլնի։ Որ մե ժամանակ կընցնի, էտ մարթի կնիկը կըմեռնի։ Էտ մարթը նախրչի էր, էտ նախրչին կէթա ուրին մե ետնի կին կըբերա, էն էրեխեքին չըպախա, չըպախապահնա, էն նախրչին ուրան կնկան կասեր. «Կնի՛կ, ախր էս էլ քու ճմերն են, պախա՛»։

—Զէ՛, բան չունես, գնա՛ քու նախրի խետ, ընտոնք ընձնե չելած, ի՞նչ պըտի պախեմ։

Էտ նախրչու իլաջը կտրավ, ուրան ճմեր կըտաներ խըտ ուրին, էլ չէր թողե տուն, որ էն կնիկ տփեր, չաղչըրեր։ Էտոնց ունին մե կարմիր կով, էտ կարմիր կովը կասեր էտ էրեխեքին. «Դու մի՛ վախեցեք, դու նստե՛ք, ես նախրի կըպախսեմ»։ Էտ կարմիր կովը չուր իրկուն նախրի կըպախեր կըժողվեր։ Էն էրեխեք կըքշին, բերին տուն։ Ըտոնց էտ ետի մերը օրական մեկ խատ խացի կուտ կըտեր էտ էրկըսին, որ կուգեր խացի վախտը, կարմիր կովը կուգեր կըկայներ, կաթ կըտեր, էտ էրեխեք կուտին։

Մեկ ժամանակ ընցավ, էն կնիկը մեկ ախչիկ բերեց, էն եթիմ էրեխեքին չէր սիրե, ուրան ախչկան կըսիրեր, էտ կարմիր կովն էլ էն էրեխեքին կըսիրեր։ Էն կնկա ախչիկը չելավ տասը տարեկան, էն էլ օղորկեց նախրի, էն եթմներին կասեր. «Ինչ որ դուք կուտեք, էտմալ կըլավցեր եք, էն էլ իմ ախչկան տվեք, իմ ախչիկն էլ ձեզի պես լավնա»։ Ախչկա խետ կըդներ չորս-խինդ խաց, կովն էն էրեխեքին սավրցուց. ասավ. «Դու մի՛ վախեցեք, էն ախչիկն էլ թո գա իմ կաթն ուտա, իմ կաթն ընդուր դառն ա, ձեզի՛ քախցը»։

Էն ախչիկ, քանի գնաց, բարակեց, էն եթմներ կըլավցան, նախրչին էլ խեղճցեր էր, չըր կանա էրթա նախրիր։ Մերը ախչկան կըխարցըներ, կասեր. «Ախչի՛, քեզի խետ կըդնեմ խինդ խաց, ընդոնց էրկըսին կըտամ մեկ կուտ, ընչի՞ ընդոնք կըլավնան, ընչի՞ դու խեղճցեր ես»։

Ախչիկն մոր կասեր. «Նամե՛, ես էն կարմիր կովի կաթ որ կու-

տիմ՝ էնենց դառն ա, սիրուս կըխառնա, էն թավուր դառն ա, ընդունք որ կուտեն, խարցնեմ ընդոնց կասեն՝ շատ քաղցր ա»:

—Շատ լավ, հիրկուն թու հրլա էն կարմիր կով գա՛:

Էլ ախչկան չըժողեց էթեր նախիր: էն մե օր էտ կնիկը սապախտան հելավի, մարդին ասավ. «Հէսօր զիշեր ես մե էրազ եմ տեսեր»:

—Ի՞նչ էրազ ես տեսե, կնի՛կ:

—Ապա էս իմ ախչիկ էսքան խեղճե, դու ըսկի տիրութեն չես անե, ախր իմ ախչկան ցավ ա դիպե, հուստ էլ տարա չըսաղցավ. զիշեր հերազի մեջ տեսա, մե սուրբ ինձի խասկըցուց, թե էն ձեր կարմիր կովը որ մորթեք, անեք էտ ախչկան մատաղ, շատ շուտով կըլավնա:

—Կնի՛կ, բա ախըր մենք կարմիր կով որ մորթենք, ախըր թան չըլնի, մածուն չըլնի, բա մենք մեր էրեխեր ինչո՞վ պախենք:

—Զէ՛, պըտի մորթես:

Նախրչու իլաճ կտրավ, ասավ.—Լա՛վ, կնի՛կ, առավոտ մորթեմ:

Կարմիր կովը էտօր նիաթ կախեր էր, հիմացավ, որ ուրին կըմորթեն:

Էտ ախչիկը, էտ տղենը, որ էկան կաթ ուտելու, տեսան, որ կարմիր կով ուրան նիաթը կախեր ա, խարցըրին.—Մեր մերիկ կարմիր կով, դու ընչի՞ ես քո նիաթ կախե:

—Անուշի՛կ, անծնվա՛ծ որթիք, ընձի կըմորթեն, ձեր էն խորթ մեր:

—Ընչի՞:

—Ուրան ախչկան մատաղ ա ասեր, ընձի կըմորթա:

—Մեր մերիկ կարմիր կով, մենք հիրիկուն կէթանք մեր խոր, մեր մոր լավա կենենք, ոտներ կըպաքենք, ձեռներ կըպաքենք, պալքի քեզի չըմորթեն:

Կարմիր կովն ասավ.—Զէ՛, չէ՛, էտմալ մի՛ ասեք, էտմալ կասեք, ձեզի կրտփա, իմ սիրտ կըմըռմըռա. ձեզ մե բան կասեմ: Որ ընձի կըմորթեն, իմ արընից գողտուկ վերցեք քսե՛ք ձեր քիթ-քերան, օրով ետ էնի կերևա ձեզի, ինչպես թե ոսկի թել, իմ օսկոռներ, իմ զլոխ, իմ ոնների էն սոլերը կըտանեք կըխորեք իմ մսուր, օրով ետ ձեզի պետք կուգա:

Էտ էրեխեք նստան, շատ կծկուծ լացին, կարմիր կովին դժար էկավ ըստոնց լալը, էկավ էրեխեքի կուշտ:

—Ինչի՞ կուլաք, ի՛մ որթիք ջան:

—Ապա ի՞նչ անինք, մերի՛կ, որ քեզի մորթեցին, մեր բերան կըցամքի, էլ մեզի պախող չըլկա:

—Արեք էթանք, էստե մե պառավ կա, ես ձեզի թասմիլ կանեմ էն պառավին:

Կարմիր կով էրեխեքին տարավ, գնաց, գնացին մեկ հէրի դուռ
կայնան:

Կարմիր կով էտ պառավին կանչեց, հելավ դուս, ասավ.—Պա-
ռա՞վ, դու զինա՞ս, որ ընձի կըմորթեն:

—Հա՛, բա՛, զինամ:

—Էս իմ էրեխեք կըտամ քեզի ամանաթ, Աստրծու ամանաթ,
կըսիրես:

Պառավ պատասխանեց.—Շա՛տ լավ, շա՛տ լավ, կարմի՛ր կով:
Թողեցին-էկան:

—Ախչի՛, տղա՛, իմ զիմի մեկ կտոշը դո՛ւս թողեք, ինչ վախտ որ
կանոթնաք, արեք ծծե՛ք, կըշտանաք, նախիրն էլ որ կըբերեք, էս
պառավ ձեզի կըպախա, —ըստեղ ասեց կարմիր կովը:

Հիրիկուն գնացին տուն, էն ախչիկ վազավ էկավ կարմիր կովի
դեմ.—Նանե՛, իմ մատաղն էկավ:

Մնաց առավոտ, կարմիր կովին մորթին: Էն կարմիր կովի էրե-
խեք կարմիր կովի արնից մեկ քասով արուն վերցին, տարան խե-
տեր, քսին ուրանց քիթ-քերան, կերպերը փոխվավ, ծամերը, թե
սիֆաթը հելան ոսկեզօծ:

Էտ կարմիր կովի միսը որ կուտեր, ըսկի խամ չըկար, ինչպես
թե դարման, էն էրեխեք որ կուտին, էնքան քախցր էր, ինչպես թե
մեղը:

Կարմիր կովի օսկոներ, ոտներ, զլոխ, ծածուկ ժողվեցին, տա-
րան պախին կարմիր կովի մսուր:

Ըտոնց արվեստ ի՞նչ էր:

Ինչքան որ կանոթնին, կէթին էն մսերքի կուշտ, կարմիր կովի կո-
տոշը կըծծին, կշտանին: Էտ ետնա կինը էլ էն մեկ կուտն էլ չըտվեց,
թողեց անոթի ընդոնց: Օրական ուր ախչկան կըկերցներ, խմցներ:
Մնաց, ձմեռ ժամանակ մեկ խառնիս էլավ: Էտ կնիկը, ուրան ախչի-
կը զարթեց, շորեր խագուց, քյամար կապեց, տարավ խառնիս: Էն
եթիմ էրեխեք մացին տուն լալով: Կարմիր կովը մսերքից ձեն տվեց,
էն պառավն էն հէրի մեշեն էկավ, կարմիր կովի մսուրը քանդեց,
շորեր խանեց խագուց ախչկան, մյուս շորերն էլ խանեց խագուց
տղին, շատ զարթարանքով տարավ խառնիստուն, բռնին ու կըխա-
ղին: Էտ ուրանց խորթ մերը որ տեսավ. «Վա՛հ, —ասավ, —երանի
էտ ախչկա տիրոչ, էտ տղի տիրոչ: Քեշքա յա էտ տղի տեր գեր իմ
ախչիկ ուզեր, ես իմ ախչիկ տեր ուր տղին, յարաք էտ զարիր ա, ո՞ր
տղից ա, յա Աստված ընձի մեկ տղա կամեներ, ես էն ախչիկ ուզեր
իմ տղին. էն վի՞ր ախչիկն ա յարաք»:

Որ մնաց խառնիս Փրղելու, պառավն առավ ախչիկ ու տղեն,
շուտ հառեչ էկավ տուն, բերեց շորներ խանեց, տարավ կարմիր

կովի մսուր պալսեց, էտ տղեն, ախչիկ էկան տուն, հընկան քնան,
պառավ թողեց գնաց:

Խորթ կնիկն առավ ախչիկն էկավ տուն, ըտոնց խանեց վեր՝ այ
սև կապես, ախչի՛, ասավ, չեկար տենիր:

Էտ եթիմ ախչիկ ասավ.—ի՞նչ, նանե՛:

—ՄԵ դըրիբ ախչիկ, մԵ դըրիբ տղա, էկած ին, բոնած ին, կըխա-
ղին: Էն ախչկա ոների սոլեր առօճաթ էր, էն տղի ոների սապոկներ
ոսկի էր, չեմ կանա թարիֆն անե էն էրկըսի շորերը միլոնով գլոխ
չէր իգե:

—Նանե՛ ջան, ապա մեզ էլ ընչի՞ չըտարար թամաշա անինք:

—Այ սև կապես դու, դու կուգաս կինես խալղի ոների մեջ, քեզի
կըկոխրձն:

Մնաց էն մեկէլ օր, բերեց կես լիղր կորեկ, լցեց մԵ կազանի մեջ,
էն տղին, էն ախչկան ասավ.—էնքան պըտի լաք, որ ձեր աչքի
արցունքը էս կորեկին ծածկա, ախչիկն զարթրեց, տարավ գնաց
խառնիս:

Հէրի մեջի պառավն էկավ, կարմիր կովի մսերքից շորեր խա-
նեց, բերեց լավ զարթարեց, բերեց աղջուր խառնեց իրար, արավ,
ինչպես թե արցնքի խամ, լցեց էտ կորեկի վրա, կորեկ ծածկեց,
էլավ ախչիկը, տղեն վերուց, գնաց խառնիա, բոնեց ախչիկ, տղեն
խաղցրեց՝ չուր ժամանակին: Խառնիս որ ֆրղելու էլավ, պառավ
վերուց ախչկան, տղին հառեջ առեց, էկավ: Էկավ թագավորի տղի
հավուզի կշտնեն ընցընելու, ախչկա ոտը քցեց, սոլ ոտեն պըռծավ
ընկավ հավուզ՝ ջրի մեջ:

—Վայ, նանե՛, իմ սոլն ընկավ հավուզ:

—Բան չըկա, որթի՛ ջան, քելեք էթանք, քանի ձեր չեկեր ա,
ձեր շորեր տեսնի վրանեղ, կառնի:

Բերեց ճժերին տուն, շորերներ պախեց կարմիր կովի մսուր,
էրեխսերն էկան ընտեղ ընկան, քնան, պառավն էլ թողեց գնաց:
Մերն քամակի խետն էկավ, ախչկան խանեց վեր:

—Այ սև կապած, էրեկվա տղեն, ախչիկ էկած ին, հէսօր էլ ու-
րիշ կեյիմ են խագած, չեմ գինա, խրեղեն են, չեմ գինա, ծովեղեն են,
էնենց փախան, չեմ գինա, թե դոր գնացին:

Մնաց լուս բացվավ, էտ քաղքի թագավորի տղեն ուրան ձին
ուղարկեց հավուզի վրեն ջրելու: Զին, ինչ հնարք արեցին, հավուզի
վրա չըգնաց, էկան թագավորի տղին ասեցին:

—Թագավորի՛ տղա, էտի հըմեն ավուր մեր հավուզն ա, ձին հը-
մեն օր կէթեր ջուր կըխմեր, հէսօր չէթար խմեր:

Թագավորի տղեն հելավ էկավ հավուզի վրա, իշկաց, տեսավ որ
մեկ բան հավուզի մեջ կըպապղա, չանկալ քցեց խանեց, տեսավ, որ

սոլ, տարավ թագավորին նշանց տվեց, ասավ. «Թագավոր, յա էս սոլի տեր մկա կըգտնես, յա ես մկա ընձի կըսպանեմ»:

Թագավոր սոլ դրեց գետին, ջառ քցեց քաղաք, ասավ. «Որքան էզեղեն կա, ժողվեք բերե՛ք»: Ինչքան էզեղեն կար, ախչիկ, կնիկ, խարս, ժողվեցին բերին, բաց էտ էրկու էրեխեն.

Էն կնիկն էտ ախչկան պախեց, թե—Սև՛ կապած, դու էտենց տկող, չփլաղ, կէժաս թագավորի դիվա՞՞ն: Ես իմ ախչիկ կօղորկեմ կէթա:

Էլավ ուր ախչիկ տարավ, գնաց: Թագավորն էզեղեն քոմ արեց, ինչքան որ կար, հիմցավ, որ մեկ պակաս ա, սոլն էլ մեկի ոտի վրեն չէկավ:

Էկան էն եթիմ ախչիկ գտան, տարան գնացին. բերին սոլ խազցրին, տեսան, որ ինչիս ուր ոտից բուսած բան՝ մ ընի:

Թագավորի տղեն ասավ.—Իմուն կա՛ էս ա, չըկա՛ էս ա:

Թե՛ թագավոր, թե՛ թագավորի կնիկ, թե՛ վազիր-վաքիլ, թագավորի տղին ինչքան խրատ տվեցին, չըլաւ:

—Էս ախչկան կառնեմ, որ ես կառնեմ:

Ախչկան բերին խարցմունք արին:

Ախչիկն ասավ.—Ընձի ունեմ մեկ խալիվոր խեր, մե խորթ մեր, մե խորթ քուր, մե խալալ էլ ախսպեր ունիմ:

—Ապա քու սոլի թայն դո՞ր ա, էս սոլի թայն:

Ասավ.—Իմ մերիկ պառավ գինա, ես չեմ գինա:

Դարձավ էկավ տուն ախչիկը, ախչկա խորթ մեր մնաց էն տեղ, թագավորի տղին կըհամոզեր:

Թագավորի տղեն զատ չէր խասկնա ըսկի: Կարմիր կովի գլոխը ախչկան ձեն տվեց: Ախչիկը գնաց մոտ:

Ասավ.—Ախչի՛, քու ախսպերն օղորկա՛ թագավորի տղի կուշտ, ասա՛, թե հիրկուն իմ մամեն կուգա, թագավորի՛ տղա, արի՛, ես իմ քուր կըտամ քեզի:

Ախչկա ախսպեր գնաց մո թագավորի տղեն.

Թագավորի տղին ասավ.—Թագավորի՛ տղա, հիրիկուն արի՛ մեր տուն, իմ մամեն կուգա, իմ քուր կըտամ քեզի:

Թագավորի տղեն հիրիկուն էկավ, մամեն հէրից էկավ, բերեց ախչիկ զարթըրեց, տվեց, թագավորի տղեն տարավ. տարան պսակեցին: Մեկ շաբաթ մնաց: Մերն էլավ գնաց ախչըկան տեսութեն, էտ խորթ մերը գնաց թագավորին խնթըրվավ՝ ախչիկ տու տանեմ էրկու օր մնա մեր տուն, էլման բերեմ:

Թագավոր ախչիկ տվեց մոր, բերեց, էկավ տուն, մե էրկու օր մնաց, բերեց ուրան ախչիկը զարթըրեց, էտ ախչկա չորեր, ինչ կար, խազուց ուրան ախչկան, տարավ տվեց թագավորի տղին,

դառցավ էկավ: Մնաց Հիրիկուն, թագավորի տղեն էկավ ուր կնկա
կուշտ, իշկաց սիֆաթ, տեսավ որ էսի ուր կնկա սիֆաթ չի, իշկաց
ձեռներ, տեսավ կնկա ձեռներ չի, ոնների սոլեր իշկաց՝ տեսավ, որ
էտ սոլեր դո՞ր, նրա ոններ դո՞ր, շատ զատն են Հիրարուց: Հելավ
ախչիկն բերեց, էկավ էտտեղ, տեսավ, որ ուր կնիկ փոխարկած ա,
կնիկն էլ, էն ախչիկն էլ զոքանչն առավ գնաց մո թագավոր, թա-
գավորին հայտնեց:

Թագավոր էրկու խատ յաբու ուզեց, էն խորթ մերն էլ, խորթ
քուրն էլ կապեց էտ յաբուի պոչերեն, տվեց էրկու տղի ձեռ,
ասաց.—Տարեք էնքան պըտըտցրե՞ք, որ էտոնց մենակ դառտակ
զլիներ մնա, որ բերեք տաք ընձի:

Տարան փչացրին, զլիներ բերին տվին թագավորին, թագավոր
թուղթ գրեց, կպուց էն քալեքի վրեն, դրեց էնտեղ օրինակ:

Ուրանք խասան ուրանց մուրազին, մենք էլ խասնինք մեր մու-
րազին:

